ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 41 – Ա 04 փետրվարի 2019 թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշմամբ հաստատված <<Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության /նշանակման/ մրցույթի կարգ>>-ի 67-րդ կետը՝

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Մարտունու բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար 2019 թվականի հունվարի 31-ին անցկացված մրցույթի մասնակից Աշոտ Մերուժանի Անտոնյանի՝ իր արդյունքների մասով, բողոքի վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Սողոմոնյան Սամվել - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության անձնակազմի կառավարման վարչության պետ

Թովմասյան Նելլի - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ

Պողոսյան Անուշ - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

Շահբազյան Հասմիկ - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ

2. Հանձնաժողովին՝ բողոքի վերաբերյալ եզրակացությունը 5-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի

մարզպետին և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Недействительная подпись

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710880069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք.Գավառ